ՄԱՆՐՈՒՔ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

I

Մենակ ես նըստած եմ տխուր սենեակում
Մարող ճրագիս առաջին.
Եւ դուրսըն անձրև է մաղում ու մաղում,
Սուլում ու կոծում է քամին...
Մենակ ես նըստած եմ և լաց եմ լինում,
Ինչպէս որբացած մի մանուկ,
Եւ ինքըս, ես ինքըս էլ չեմ հասկանում՝
Ինչու՞ եմ թափում արտասուք։

II

Կայ մի մայր հեռաւոր հարաւում,
Զառամեալ, սըրտամաշ մի էակ.
Լուռ ու մունջ նա արցունք է թափում,
Անտէր, անըսփոփ, միայնակ։

—

Արցունք թափելով ըսպասում է
Նա անգին և պանդուխտ իւր որդուն.
Բայց որդին հողի տակը նընջում է
Հեռաւոր Ֆիւնապատ հիւսիսում։

Մոսկու. 1889 Թ.